

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրջի. կես տարվանը 6 բուրջ.  
Առանձին համարները 5 կոպեկով.  
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.  
Մեր հասցեն. Тифлисы, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Redaction „Mschak“.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն).  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.  
Յայտարարութիւնների համար վճարում են  
խւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Վշտահար Պետր Եղորովի Սանջիւլաձէն, Եկատերինա Եղորովնա, Ստեփան և Իվան Սափիւկի Մանվելիները և Սեֆիա Սափիւկի և շտաբ-կապիտան Գեորգի Եօսիֆովիչ Շաւղուկիձէները խորին վշտով յայտնում են ծանօթներին ու ազգականներին առաջին կնոջ, երկրորդի դստեր, երրորդների քրոջ և վերջինի բնու, սիրելի և անմոռանալի

## ՄԱՐԻԱ ՍԱՎԵԼԵՎՆԱ ԽԱՆՁԱԼԱՋԻ

(Օրհնակ Մանվելովա)  
Սանջիւլաձէն Իր Եկատերինայի (Միքայէլեան պրոպիէտ № 148) կը տարվի Վանքի Մայր Եկեղեցին կիրակի օրը, նոյեմբերի 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, իսկ այնտեղից Սոփիականի գերեզմանատունը: Ամբիժը շարաթօրը, երեկոյեան ժամը 6½-ին:

Վշտահար Եկատերինա Փրիգոնեան Հիշուբանցը, Կոստանտին Հիշուբանցը, Դաւիթ և Լևոն Սիւքսանդրեան Հիշուբանցները խորին վշտով յայտնում են ազգականներին և բարեկամներին քաղաքացիական ինժեներ

## ԱԼԷԿՍԱՆԴՐ ՀԷԶՈՒԲԵԱՆ ՀԷԶՈՒԲԵԱՆՑԻ,

առաջինի որդու, երկրորդի եղբոր և վերջինների հօր մահը: Դազգայն իր քնակարանից (Արաւ ապարանի հրապարակ տիկին Հիշուբանի տուն) կը տարվի Զիգրաշէնի Ս. Սատուածաձին եկեղեցին նոյեմբերի 7-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, իսկ այնտեղից Լի Վերայի հանգստարանը: Ամբիժը շարաթօրը երեկոյեան ժամը 6½-ին:  
2-2

### ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Պատերազմական բեմը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Դրամատիկական ընկերութեան ժողովը. Նամակ Նոր-Բայազետից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղադական աշխարհից.—ՀՆՈՒՄԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ. Մի բանի օր Ղարաբաղում:

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԸ

#### IV

Պատերազմական բեմում, ճիշդ է, վերջին օրերս տեղի ունեցան մի քանի խոշոր ընդհարումներ, բայց նրանք դեռ ևս կրում են առանձնակի գործողութիւնների բնաւորութիւն: Հեռագրական գործակալութիւնը լուր բերեց, որ իբր թէ նոյեմբերի 6-ից հապոնացիները պէտք է սկսեն յարձակողական շարժումներ և ա-

ռաջ ընթանան դէպի հիւսիս: Հաղորդից և այն, որ հապոնացիների համար Շախէ գետի վրայով անցնելը դժուար է այն պատճառով, որ ջուրը սառել է: Մենք տեղեկութիւններ տուինք այն մասին, որ երկու պատերազմող կողմերը օժանդակ զօրքեր են ստացել և կառուցել են մի շարք ամրութիւններ և պատնէշներ հակառակորդին ուժեղ կերպով դիմադրելու համար:

«Ручь» լրագրի թղթակիցը հեռագրում է Մուկդէնից թէ հապոնացիները մեծ քանակութեամբ զօրքեր են տեղափոխում դէպի արևելք, դէպի իրանց աջ թևը: Լստ երևոյթին նրանք դիտաւորութիւն ունեն կրկնել այն զօրաշարժները, որ նրանք կատարեցին Լսոեանի մօտ, այսինքն հարաւում որոշ ուժեղ շարժումներ անել Նոդուի և Օկուի զօրքերի միջո-

## ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ

### ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ես նոյնպէս, իբրև բուն աւիացի, օտար երկրներ պատկուց յետոյ, վերջապէս հարկաւոր համարեցի գնալ տեսնել մեր երկրի մի անկիւնը, Ղարաբաղի հոյակաւոր լեռնային ընդթիւնը, որի գովասանքը շատ էի լսել նրա հարազատ գաւաղներից: Չարմանալի մարդիկ են զարաբաղցիք, բոլորովին նման չեն ուրիշ գաւառացի հայերի: Իմ կարծիքով, նրանց տիպը նկարագրելու համար պէտք է գործածել լոկ երկու բառ. հողուով բանաստեղծ, արտաբուստ կոպիտ: Շատ անգամ մտածել էի, որ այս տարօրինակ ժողովուրդը, որի կէտը երաժիշտ է, պէտք է ունենայ և տարօրինակ հայրենիք:

Ի հարկէ, նախ և առաջ տեսայ մայրաքաղաքը, Շուշի: Լաւ դիտելու համար, ընտրեցի գլխաւոր բարձրաւանդակը, ուր գտնվում է գերեզմանատունը: Մոռելիքի այս խաղաղ աշխարհը կուշ է եկել մի հակադաս ժայռի տակ, որը բարձրից, կախած երկիւղ է տաւածում շուրջը: Գերեզման փորող ձերուկին, քունդը մի կողմ դնելով, պատմեց ինձ, որ մի քանի տարի առաջ այդ ժայռիցի մի անգին կտոր վայր ընկաւ և իր հետ գործեց ձորը շատ գերեզմանաբեր: Այստեղ զգացի առաջին անգամ ընտանեկան կոպտութիւնը:

—Ում համար ես փորում փորը, հարցրի ես Համէտի նման:

—Մի երիտասարդի համար, որ զինւորու-

թիւնից հիւանդ վերադաժաւ ու մեռաւ:

—Մեղքը չէ՞ գալիս, ծերուկ, որ ջանքի համար գերեզման ես փորում:

—Հրմ, եղաւ պատասխանը: Թիով մի փոքր հող հանելուց յետոյ ըրտնքը սրբեց ու մէջքը ուղղեց: Ոչ թէ մեղք է, այլ վարձք է... մեղք այն ժամանակ կը լինէր, եթէ միայն երկրի երեսին ու թռչունների կերակուր դառնար:

Սովորաբար քանի արշին խորութեամբ է փորվում գերեզմանը:

—Տղամարդու համար մինչև գօտի, իսկ կընոջ համար մինչև ծծեր... է է... մեռած մարդու համար գերեզման փորել մեղք է, ոչ թէ մեղք, այլ վարձք է:

Գլուխը նորից վերցրեց ու պատրաստվեց շարունակելու գործը, երբ մի մարդ, որ քիչ հեռու պատկած էր մահաբաժնից ընկած ստուռի մէջ, խոսեց:

—Պօղոսից լսել եմ, որ թէ տղամարդու և թէ կնոջ համար երկու արշին խորութեամբ պէտք է փորվի:

—Հրմ... Աստուած հոգին լուսաւորէ, բայց նա ինչ գերեզման փորող էր, նա փրկաւ էր, փրկաւ: Մեղք չէ, այլ վարձք է:

—Քանի տարի է ինչ այս գործով պարապում ես, հարցրի ես:

—Վաղուց է... Ես ժամկոչ էլ եմ... ոչ, աղա, մեղք չէ, վարձք է:

Այդ բարձրաւանդակից սկսեցի դիտել թէ քաղաքը և թէ շրջակայքը, որը ներկայացնում է ընդարձակ լեռնային տարածութիւն: Շուշին ինձ յիշեցրեց ձնադալարը—Սղնախ, ուր անց եմ կացրել մանկութիւնս: Միտում եմ այդ գեղաբաղկաւ անկիւնը, բայց լինէր օդում Նաւարդ սիրահարի նման հեռացել եմ ընդ միշտ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ Ս Մ Ո Ւ Լ

Մենք հաղորդեցինք, որ ներկայումս Պետերբուրգում խօսակցութիւններ տեղի ունեն երկաթուղային տոմսակների դէմ թանաքանկու մատին: Դա մի շատ նշանաւոր հարց է, որ շոշափում է ազգաբնակչութեան կարևոր շահերը: Արդէն ոչ ոքի համար գաղտնի չէ թէ ինչ աւազին նշանակութիւն ունի մի երկրի համար արագ ու էփան հաղորդակցութիւնը: Որքան էփան, այնքան շատ—սա արեւմտ է: Ֆինանսների նախկին մինիստր Վիտտէի ժամանակ տիրում էր այն սկզբունքը

Այս երկու քաղաքները իրանց դիրքով, նեղ ու գաղիվայր փողոցներով, անշուք անեղծով, իրանց փոքրիկ պարտէզներով և վերջապէս անտանների աշխատանքներով ու բազմաթիւ էջերով ապշելու չափ նման են իրար:

Հանգստարանից իջնելիս մի աղբիւրի մօտով անցայ, ուր մի քանի թուրք կանայք ու երեխաներ իրանց աւանակների հետ հետաքրքրական խումբ էին կազմել: Այդտեղ կանգ առայ մի քովք ու հիտարբերվեցի իմանալ, թէ ինչ աղբիւր է դա: Մի բաւական լաւ հաղնիված թուրք, որ պատահամբ բարձրանում էր ձիով, բացատրեց ինձ, որ դա թամիւրեանի աղբիւրն է: Իսկոյն յիշեցի, որ այդ անունով երիտասարդին անցելաւ տալիս սպանեցին:

—Սպանվածի ի՞նչ...

—Հէնց ինքը սպանվածն է բերել այս աղբիւրը, շտապով պատասխանեց թուրքը, որի հետ հետեւաւ օրը ծանօթացայ և իմացայ, որ նրա անունը Սուլէյման խան է:

—Ինչո՞ւ սպանեցին, յայտ...

—Յայտնի է, ընդհանրեց խօսքս,—որովհետեւ աղբիւրը բերեց:

Այս ասելով գլխարկը շարժեց ու մտակելով ձիուն սլացաւ:

Միւս օրը ճանապարհիցի դէպի Գօրիս. Չանգեղուրի գաւառը հետաքրքրում էր ինձ, յոյս ունէի որ և է նոր բան տեսնելու, թարմ նիւթ գտնելու: Մասնագիտութեան վերաբերեալ: Նոյն սարերն ու ձորերը, նոյն ժայռերն ու փրփրադէզ գետակները, նոյն թփերն ու անտառները, որ շատ անգամ տեսել էի մեր հրաշալի Կովկասի միւս կողմերում, օրինակի համար, ինչպէս Գուգարաց աշխարհում:

Գօրիսում հիւրանոց իջայ փոքր ինչ հանգստանալու, որպէս զի միւս առաւօտ կանուխ

թէ երկաթուղով ճանապարհորդուից պէտք է այն վերջնել, ինչ հնարաւոր է: Այդ սկզբնական էլ ներկայ երկաթուղային տարիքի հիմքն է կազմել: Տալը տարի է, գոյութիւն ունի այդ տարիքը: Զարգացրել է նա հաղորդակցութիւնը: Անշուշտ: Բայց երկաթուղիների վարչութիւնը գոհ չէ այդ դրութիւնից: Ծանապարհորդների թիւը, ասում է նա, շատ չէ աւելացել. երկաթուղիները փաստ են կրում: Անա այդ փաստի դէմ պէտք է դուրս գալ թանաքաքանդ տոմսակներով: Բայց դա հարցի լուծում չէ: Կը թանաքանէր, և ձեռն առաջին ու երկրորդ կարգի վագոնները դատարկ կը գնան: Վասնից առաջանում են ուրիշ պատճառներից և դրանցից մի բանիւր մատնացոյց է անում «Рус. Слово» լրագրի: Ամենից առաջ—հովանաւորող քաղաքակրթութիւնը: Ինչու աստանում շատ թանգ է նստում երկաթուղիների կառուցումը և շահագործումը, որովհետեւ բոլոր կարևոր պարագաները թանգ գընով ձեռք են բերվում: Բայց թանգ են անվում այդ պարագաները այն պատճառով, որ երկաթուղային պատկանելիքների արդիւնաբերութիւնը զարգանայ: Ազգաբնակչութիւնը, սերնմ, առանց այդ էլ աւելորդ փող տալիս է գործարանների պ.պ. ակցիոներներին: Միթէ այդ տուրքի փոխարէն նոյն ազգաբնակչութիւնը չէ կարող գոնէ էփանացրած հաղորդակցութեան բարեբանը վայելել: Երկրորդ պատճառն այն է, որ երկաթուղային երկրորդական գծերի թիւը գնալով մեծ ցանցեր են կազմում: Այդտեղ ճանապարհորդների մեծ տեղափոխութիւն չը կայ և չէ կարող լինել: Երկրորդական գծերը փաստներ կրում են և այդ փաստները բարդվում են երկաթուղային ընդհանուր ցանցի վրա:

Էփանացրած տարիքը, ասում է լրագիրը, մտքոված է 1894 թվականի վերջերում: 1894 թ վերջից մինչև 1902 թ վերջը ճանապարհորդների ընդհանուր քանակութիւնը երրորդ կարգի վագոններում երկաթուղային է, երկրորդ կարգինը՝ քաղաքակրթիւն, իսկ առաջին կարգում աւելացել է 2½ անգամ: Մի և նոյն ժամանակ երկաթուղային ցանցի ընդհանուր աւարտութիւնը աւելացել է երկու անգամ: Իսկ մինչև այսօր նոյն այդ

շարունակեմ ճանապարհս:

Ես ծառայ ուղարկեցի հին ծանօթիս գտնելու, իսկ հիւրանոցի սպասաւորին կօշկներս յանձնեցի սրբելու: Անխաւք տարաւ ու տաւ: Բաւ: Ուրիշ բան չունէի հազնելու, ուստի ստիպված մահճակալիս վրա մնացի ծալապատակ նստած: Շատ բղաւցի, շատ շարժանքի էլքերական հնչակը, սակայն անօգուտ: Կօշկներին համար այնքան չէի նեղանում, եթէ ծառաւ չը լինէի:

Վերջապէս վերադարձաւ ծառան ու ազատեց ինձ նեղ դրութիւնիցս: Նա ու հիւրանոցի սպասաւորը իրար հայնոյնով միասին ներս բերին կօշկներս:

Տրամադրուած էի սարսափելի կերպով բարկանալու այդ աստիճան անուշաբուրեան համար:

—Այ աղայ—այսպէս սկսեցի:

—Հաջան, եղաւ պատասխանը: Բարկանալու տրամադրութիւնս բոլորովին ոչնչացրեց փուշը: Իր շիւ աչքերով շեղատակի նայում էր երեսիս:

—Ի՞նչ ես հրամայում, աղա:

—Ոչինչ, սամովար պատրաստիր:

—Աչքիս վրա:

Փոթորիկը սրանով վերջացաւ:

Հարկաւոր է մի փոքրիկ բան պատմել ու յետոյ շարունակել խօսքս:

Այն օրից, որ ինքս ինձ յիշում եմ, մօտս գտնվում է մի մարդ: Ոչ նա է ինձանից հեռանում, ոչ ես եմ նրան արձակում, որովհետեւ մենք չենք կարող այդպիսի բան անել: Նա ինձ համար երբեմն ծառայ է, երբեմն թիկնապահ, երբեմն տան պահապան, իսկ միշտ ճանապարհակիցս: Ես նրան հաւատում եմ ամեն բան, տունս, տեղս, ունեցած չունեցածս, բայց





Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул № 15